

## ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

(Ծննդյան 170-ամյակի առթիվ)

... Կենսագրությունը Մխիթարյան միաբանության անդամներից մեծագույնի մասին համառոտ է այնքան, որ կարելի է շարադրել ընդամենը մի քանի նախադասությամբ: Ծնվել է Պոլսում 1820 թ. հուլիսի 6 (18)-ին, դրամագետ-հնահավաքի (նումիզմատ-անտիկվար) ոչ բազմանդամ ընտանիքում: Ծննդավայրի հայկական քառամյա դպրոցն ավարտելուց հետո, 1832 թ. փոքր եղբոր՝ Սերովբե Ալիշանյանի հետ մեկնել է Վենետիկ, ուսումը շարունակելու համար և 1840 թ. դարձել է Վենետիկի համբավավոր Մխիթարյան միաբանության անդամ: 1848-51 թթ. վարել է Մխիթարյան միաբանության պարբերականի՝ «Բազմավեպի» խմբագրապետի պարտականությունները՝ փոխարինելով նշանավոր Գաբրիել Այվազովսկուն: Տարիներ շարունակ «Պատմություն» և «Բարոյականություն» առարկաների ուսուցիչ է եղել ինչպես Վենետիկի «Մուրատյան», այնպես էլ Փարիզի «Ռափայեյան» վարժարաններում, այլևայլ առիթներով եղել է Եվրոպայի գրեթե բոլոր նշանավոր քաղաքներում՝ Հռոմ, Միլան, Վիեննա, Լոնդոն, Օքսֆորդ, Բրյուսել, Բեռլին, Մյունխեն, Ամստերդամ և այլն, բայց երբեք չի եղել Հայաստանում: 1872 թվականից մինչև իր կյանքի վերջը «անելուզակ կերպի» (իր արտահայտությունն է) ապրել է Վենետիկում, ավելի ճիշտ՝ Սուրբ Ղազար կղզում և այստեղ էլ մահացել է 1901 թ. նոյեմբերի 9 (22)-ին ու թաղվել կղզու ծայրամասում գտնվող «Մխիթարյան հարց գերեզմանոցում»: Ահա թերևս բոլորը...

Ալիշանը գրական անդաստան իջավ որպես բանաստեղծ: Նրա բանաստեղծությունների առաջին փունջը, որն ունի «Երգք հանգրուանաց» հատկանշական վերնագիրը, ունի 1840 թ. նշումը, թեև չի բացառվում, որ նա ավելի առաջ էլ գրած լինեք զանազան ստեղծագործություններ՝ ինչպես չափածո, այնպես էլ արձակ: Իսկ Մխիթարյան միաբանությունը, որը մինչև Ալիշանը, շուրջ հարյուր տարվա պատմություն ուներ, արդեն մշակել էր բանաստեղծելու իր օրենքներն ու օրինաչափությունները, այժմյան ոճ ասած իր պոետիկան, որից և ոչ ոք բացառություն կազմել չէր կարող: Այս օրինաչափությունները հայրերը պարտադրաբար ուսուցանում էին ամեն երիտասարդ ստեղծագործողի, և, հասկանալի է, պահանջում նրանից: Դրանք գրվում էին որպես գիտական տրակտատ՝ ի օգտագործումն հաջորդների<sup>1</sup>, դրանցով առաջնորդվում ու դրանցով էին ղեկավարվում որևէ ստեղծագործություն արժեքավորելիս: Գեղարվեստական ստեղծագործության չափանիշ համարվող այդ օրենքները համառոտակի հետևյալն էին: Քանի որ բանաստեղծությունը արվեստներից վսեմագույնն է, ուրեմն պետք է գրել անպայման գրաբար (Մխիթարյանները նույնիսկ մինչև 20-րդ դարի սկզբները շատ էլ հաշտ չէին աշխարհաբարի հետ) և սեփական հմտությունը և լեզվին քաջատեղյակությունը ցույց տալու համար օգտագործել որքան կարելի է դժվարամարս, ինքնահնար բառեր ու ոճեր: Ստեղծագործության համար որպես թեմա պետք է վերցնել միայն «Բանք վեհագոյնք», այսինքն՝ Աստված, Քրիստոս, եկեղեցական այլևայլ տոներ ու արարողություններ, աստվածաշնչային սրբերի կյանքից վերցված այլևայլ դրվագներ, սակավ դեպքում՝ նախնյաց պատմության առավել նշանավոր դեմքերն ու դեպքերը: Կարելի էր նաև անդրադառնալ, և այն էլ միաբանության ներքին շահերից ելնող դիվանագիտության թելադրանքով, զանազան «ազգայիններին» (Տատյաններ, Տյուզյաններ, Տետեյաններ)՝ իրենց հրատարակությունները ֆինանսավորած հայազգի գործիչներին, Ս.Ղազար այցելած հասարակական-քաղաքական նշանավոր դեմքերին (Ալեքսանդր II կայսր, Ֆրանց-Իոսիֆ, Մետտերնիխ, Իտալիայի թագավոր Հուլիոս II) և այլն:

<sup>1</sup> Էդ. Հյուրմյուզյան, Առձեռն բանաստեղծություն, Վենետիկ, 1887, 220 էջ:

Այսպիսին էր գեղարվեստական գրականության համար մշակված այն անբեկանելի «ընթացքը», որի բնութագիրը համառոտ տվեցինք և հասկանալի է, որ այդ բնագավառում առաջին քայլերն անող քսանամյա Ալիշանը չէր կարողանալու և չէր էլ փորձելու հակադրվել իր նախորդներին. նախորդներ, որոնցից շատերը «գործող անձ» էին հենց նրա ժամանակ: Եթե ասենք միայն, որ Ալիշանի հանդես գալու տարիներին հանրահայտ անուններ էին Գաբրիել Ավետիքյանն ու Եղիա Թովմաճանը, հայության մեջ լայն ճանաչում ուներ Մանվել Զախջախյանը, իր գրական փառքի զենիթում էր Արսեն Բագրատունին, ապա համապատասխան մեկնաբանություններն արդեն ավելորդ կլինեն:

Եվ Ալիշանն էլ, հասկանալի տրամաբանությամբ, ոչ միայն սկսեց իր մեծերի նման, այլև ինչ-որ տեղ կարողացավ անգամ գերազանցել նրանց: Շարունակելով ավանդույթը՝ նա էլ գրում էր խրթին, ծանրամարս գրաբարով, օգտագործելով բազում արհեստական բառեր ու արտահայտություններ («լեզու» բառի փոխարեն, օրինակ, գործածում էր «բարբառիչ ճշմարտութեան», «գլխի» փոխարեն՝ «խորհրդարան մտաց», «քայլելը» փոխարինում էր «ոտնափոխումն արարեալ»-ով և այլն), և դա՝ հաճախ այնքան, որ առանց բառարանի ու մտքի լուրջ ճիգերի անկարելի է հասկանալ: ՌԻՆԻ բազմաթիվ բանաստեղծություններ, որոնց սոսկ վերնագրերը՝ «Ի ծնունդ տեառն», «Միայն ի խաչի հանգիստ», «Ի յարութիւն տեառն», «Նուիրումն առ աստուած», «Խոստովանութիւն հաւատոյ» և այլն, արդեն խոսում են իրենց մասին: ՌԻՆԻ, վերջապես, մեկից ավելի ներբողական բանաստեղծություններ էլ, որոնք նվիրված են իր ծանոթ-բարեկամներին, իրեն սատար հանդիսացած մեծամեծներին, կամ դամբանականներ՝ այս կամ այն նշանավոր հանգուցյալների մահվան կապակցությամբ («Ի պատկերն Էմմայ», «Ողբ ի մահ արհիհօր Սուքիաս Սոմալեան», «Ի մահ Յակոբ Տիւզեան» և նույնիսկ՝ «Առ Աղանուր սեպուհ, առաքելով օձաձուկն») և այլն: 1857-58 թթ. Վենետիկում հրատարակված նրա չափածո բանաստեղծությունների «Նուագք» խորագիրը կրող հինգհատորյակում տեղ գտած գործերի գերակշիռ մասը վերնում ասված բնույթն ու գաղափարական ուղղվածությունն ունեն և գալիս են մի անգամ ևս հավաստելու, որ Ալիշանը պատրաստվում էր միանգամայն օրինակելի և ավանդապահ Մխիթարյան դառնալ:

Սակայն 18-րդ դարի վերջերից և մանավանդ 19-րդ դարի սկզբներից ծայր առած ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների այն երկաշարքը, որը պատմագիտական գրականության մեջ հայտնի է «Արևելյան պատերազմներ» ընդհանուր անունով, եկավ վճռական բեկում մտցնելու Ալիշանի (և, ի դեպ, ոչ միայն Ալիշանի) գեղարվեստական ստեղծագործության մեջ: Հյուսիսից հաղթականորեն առաջխաղացող ռուսական բանակները հույսեր էին ներշնչում բազմաչարչար հայությանը, որ մոտենում է պարսկական ու թուրքական՝ ասիական տիպի բռնապետությունից ազատվելու բաղձալի բոլայն: Նշանակում է հարկավոր էր ոտքի հանել հայ ժողովրդին և նրան կովելու, պատերազմով ազատությունը ձեռք բերելու անսքող կոչ անել: Հարկավոր էր փառաբանություններ հյուսել «վասն հայրենյաց» կովող քաջերին, նշավակել դավաճաններին ու դավաճանությունը, քաջալերանքի հորդոր կարդալ տատանվողներին, «ի մարտ» կոչել հայորդիներին. մի բան, որն արդեն անում էին մեր դասականներից Պեշիկթաշյանը («Կուգեմ վառող և գնդակներ»), Նալբանդյանը («Ներկա օրերում այլ ինչ սև քնար, սուր է հարկավոր կտրիճի ձեռքին»), Ռ.Պատկանյանը («Ամոթ է քեզ, հազար ամոթ, որ զենք չունիս քո ձեռքին»), Ս.Շահագիզը («Ես սիրում եմ Հայրենիք») և շատ ուրիշները: Իսկ այդ անել կարողանալու համար լալահառաչ աղոթքներ առ Աստված, կամ նրան մշտապես հավատարիմ լինելու հավաստիացումները, կամ վշտակցությունը Քրիստոսի կրած չարչարանքների համար և այլն, - այսպիսի «երկնային» թեմատիկայով գրված գործերն արդեն չէին կարող պիտանի լինել: Եվ Ալիշանը, որոշակիորեն բացազատվելով իր նախորդներից, բանաստեղծությունների համար սկսում է թեմաներ վերցնել հայ ժողովրդի համար առավել հերոսական դրվագներից՝ նորերին ևս այդ ոճով դաստիարակելու համար: Իրար են հաջորդում շոնդալից, մարտակոչային բնույթի բանաստեղծությունների մի ամբողջ շարք՝ «Ի բամբիռն Հայկազնի», «Կարմիր Վարդան», «Սեպուհն

Վասակ», «Ի սուրբ Ղևոնդ», «Դատաստանք Վասակայ մատնչի», «Ի նախագահին Մասիս», որոնք հայ հայրենասիրական պոեզիայի լավագույն նմուշներից են:

Բանաստեղծությունը դարձնելով «Հայ մանկտեաց» ոգևորելու, նրանց «Ի զեն, ի վրեժ» կոչելու հզոր միջոցներից մեկը, Ալիշանը, սակայն, աստիճանաբար կարողացավ ընկալել, որ ժողովրդին մինչև վերջ հասկանալի լինելու համար գրաբար լեզուն արդեն որոշակի խոչընդոտ է հանդիսանում: Եվ այստեղ էլ, ճշտորեն կարողանալով կողմնորոշվել լեզվի հարցում, դարձյալ բացազատվելով Մխիթարյան իր նախորդներից, նա իր ընտիր գործերը գրեց աշխարհաբարով, թեև, ի դեպ, մինչև իր կյանքի վերջն էլ բացասական կարծիք ուներ այդ լեզվի մասին: Եվ ալիշանյան աշխարհաբարը, այսինքն՝ մի լեզու, որ հատկանշական էր միայն և բացառապես Ալիշանին, սկզբից իսկ ավելի ու ավելի աճող քանակով համակիրներ նվաճեց: Այս բնույթի առաջին ստեղծագործությունը, որն ուներ «Նահապետ» կեղծանունը և թե՛ ըստ ձևի, թե՛ ըստ բովանդակության նորություն էր, հրատարակվեց «Բազմավեպում» 1847 թ. հունիսին և ուներ «Հայոց աշխարհիկ» խորագիրը: Բանաստեղծությունն աղմկոտ հաջողություն ունեցավ: Հեռավոր Հնդկաստանում Մեսրոպ Թադիադյանը դրվատական առաջաբանով արտատպեց այն իր «Ազգասեր Արարատյանում»: «Հայոց աշխարհիկի» որոշակի ազդեցության ներքո Պեշիկթաշյանը պետք է գրեր իր մի քանի բանաստեղծությունները, իսկ Պոլսում գտնվող Արսեն Բագրատունին պետք է հիացական նամակ գրեր Վենետիկ՝ միաբանության իր ծանոթ-բարեկամներին և խնդրեր տեղեկացնել, թե ով է «Նահապետը»՝ այդ «նորովի տաղանդը»: Էլ ավելի մեծ եղավ նույն թվականի հոկտեմբերին «Բազմավեպում» հրատարակված «Պլպուլն Ավարայրի» պոեմի գրական-հասարակական արձագանքը: Այսպես պետք է ստեղծվեին տասնմեկ բանաստեղծություններ, այն վարդափունջը, որը հետագայում՝ 1860-ական թվականներին պետք է ամփոփվեր «Երգք Նահապետի» ընդհանուր խորագրի ներքո և այդ ժամանակվանից սկսած առ այսօր դառնար մեր գրականության մնայուն արժեք ունեցող գործերից մեկը: Այստեղ էլ Ալիշանը հավատարիմ է մնացել ինքն իրեն, զարգացնելով հայրենասիրական ու ազատախոհական այն տրամադրությունները, որոնք նոր չէին նրա մոտ և առավել ուժգնությամբ են հնչում անգամ այսօր՝ մեր օրերում:

Թող աշխարհաց լուր լինի,

Որ քանի եմք կենդանի,

Հայաստան ոչ տի մեռնի:

«Երգք Նահապետի» խորագրի ներքո զետեղված գործերը բազում վերահրատարակությունների արժանացան, զետեղվեցին այլևայլ ժողովածուներում, ավանախներում, գրականության քրեստոմատիաներում, դպրոցական դասագրքերում, ձայնագրվեցին երգահանների կողմից, թարգմանվեցին անգլերեն (թարգ. Ալան Ստոն Բլաքվել), գերմաներեն (թարգ. Աբգար Հովհաննիսյան), ֆրանսերեն (թարգ. Ա.Չոպանյան և Պոլ Ադամ), իտալերեն (թարգ. Էմիլի Տեզա), դանիերեն (թարգ. Ինգա Կոլլին), ռուսերեն (թարգ. Յու. Վեսելովսկի, Ս.ՌԻմանեց, նորերից՝ Ս.Ներվինսկի) և արժանացան օտարազգի ընթերցող ու գիտական հասարակայնության ջերմ ուշադրությանն ու դրվատանքին: Այդ բանաստեղծաշարն ի նկատի ուներ Միքայել Նալբանդյանը, երբ գրում էր, որ «արժանավոր վարդապետը չափաբերական քերթվածոց մեջ ախոյան չունի», «նորա գործերը ջերմացուցեր են շատ սրտեր Նահապետի անունին ի վեր»: Եթե նկատի ունենանք, որ Նալբանդյանի՝ հայ գրողներին տրված գնահատականների մեջ սա ամենաբարձրն է, եթե չմոռանանք, որ Նալբանդյանը ընդհանուր առմամբ բացասաբար էր տրամադրված դեպի Մխիթարյանները և մի անգամ չէր, որ գրով և բանիվ հանդես էր եկել նրանց դեմ, ապա հասկանալի կդառնա վերոհիշյալ գնահատականի ամբողջ արժեքն ու նշանակությունը: Իր գրաբար հայրենասիրական պոեզիայով և առանձնապես «Երգք Նահապետի» բանաստեղծաշարով, Ալիշանը հիմքից խախտեց կլասիցիզմը և հաստատուն կերպով ճանապարհ

հարթեց գրական հաջորդ ուղղության՝ ռոմանտիզմի համար, ինքն էլ, այսպիսով, դառնալով այդ ուղղության առաջին ներկայացուցիչներից մեկը մեր գրականության մեջ: Վերջին և միաժամանակ ամփոփող ու ի մի բերող խոսքը հանդիսացավ «Հուշիկք հայրենյաց հայոց» հատկանշական խորագիրը կրող երկհատորանոց պատմա-գեղարվեստական արձակը, որը հրատարակվեց Վենետիկում 1869-70 թթ., որը նաև հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպում»՝ 1862 թ. հունվարից սկսած:

Մինչև այդ էլ Ալիշանն իր կարողությունները փորձել էր գեղարվեստական արձակի բնագավառում<sup>2</sup>, սակայն այդպիսի մեծ թեմատիկ ընդգրկում ունեցող գործով նա հանդես էր գալիս առաջին անգամ: Եվ պատահական չէր, որ «Հուշիկք հայրենյաց հայոցը» երկու անգամ վերահրատարակվելու բախտին արժանացավ (Վենետիկ, 1921թ. և 1944թ.), նրանից այլևայլ հատվածներ մեկից ավելի անգամ գետեղվեցին ժողովածուներում ու պարբերականներում, թարգմանվեցին եվրոպական լեզուներով և ուրեմն՝ հայտնի դարձան նաև եվրոպացի ընթերցողներին («Թեոդորոս Մալիուսի» գլուխը՝ ֆրանսերեն, 1872 թ., «Կարմիր Վարդան» գլուխը՝ իտալերեն, 1875 թ.): «Հուշիկք»-ը լույս աշխարհ գալուն պես ունեցավ իր ոճով ու ոգով գրող հետևորդներ ինչպես Մխիթարյան միաբանության արձակագիրների շրջանում, այնպես էլ դրանցից դուրս: Պատմա-գեղարվեստական այդ արձակի մասին դրվատական գրախոսականներով հանդես եկան Գրիգոր Արծրունին, Աբրահամ Այվազյանը, Արշակ Չոպանյանը, Հրաչյա Աճառյանը, Սերգեյ Սարինյանը և ուրիշներ:

Լայն կտավի արձակին անցնելը ուներ իր հետևյալ պատճառաբանությունը: Ալիշանի նպատակն էր՝ հայ ժողովրդի պատմության առավել հերոսական դրվագների գեղարվեստական վերարտադրության միջոցով, «հայ մանկտիներին» դաստիարակել ազգային հայրենասիրության ոգով: Սկզբնական շրջանում, երբ հայի ու Հայաստանի փրկության հարցերը դրվում էին համեմատաբար ընդհանուր ու անորոշ կերպով, բանաստեղծությունն ու պոեմը բավարարում էին վերոհիշյալ նպատակին: Սակայն դարի 70-80-ական թվականներին, երբ իր ամբողջ լայնությամբ ու խորությամբ սկսեց առաջ քաշվել մեր ժողովրդի փրկության հարցը, այս պայմաններում բանաստեղծության ձևն արդեն շատ «նեղ» ու չափազանց փոքր հնարավորություններ էր ընձեռում: Եվ Ալիշանը վստահորեն անցնում է գեղարվեստական արձակի բնագավառը, ապացուցելով, ի դեպ, որ այդ ասպարեզում էլ նա նույն քաջամարտիկն է, ինչպիսին որ էր բանաստեղծությունների բնագավառում: Եվ, ինչպես սպասելի էր, «Հուշիկք հայրենյաց հայոցը» արտահայտում էր այն նույն հայրենասիրական, ազատասիրական տրամադրությունները, որոնց հանդիպել էինք բանաստեղծությունների առնչությամբ: «Ուրեմն եմ, – այս առիթով գրում է Ալիշանն այդ գործի առաջաբանում, – հայրենյաց սրբազան զգացման մեծ վառարանեն մեկ-երկու կայծեր թափել ի սիրտ քո, Հայկակ, և քեզի նման հայազգի համբակաց»: Այս նպատակն էլ գեղեցիկ կերպով ի մի է ձուլում գրքի բոլոր 33 գլուխները, թեև առաջին հայացքից նրանք հայոց պատմության ամենատարբեր շրջաններից վերցված թեմաների գեղարվեստական վերարտադրությունները լինելով, թվում է, իրար հետ ընդհանուր ոչինչ չունեն: Այս իմաստով էլ ամբողջ «Հուշիկք հայրենյաց հայոցը» դարձել է ջերմ ու կենարար հայրենասիրության մի յուրահատուկ գլուխգործոց: Իրար հաջորդած հասարակական-քաղաքական դեպքերի ու իրադարձությունների վերարտադրությունը՝ Հայաստան աշխարհի ներշնչված նկարագրումը («Բնախոսություն Հայաստան աշխարհի»), Մուշեղ Մամիկոնյանի կոիվը արաբական հրոսակների դեմ Բագրևանդում («Բագրևանդա կոիվ»), Վարդան Մամիկոնյանի՝ Ավարայրի դաշտում մահանալով անմահանալը («Կարմիր Վարդան»), «Հայոց Գուտտենբերգի», այսինքն՝ Աբգար դպիրի արած հրատարակությունների բնութագրությունը («Աբգար դպիր և հայ տպագրություն») և այլն, գալիս են նոր շյուղեր և հայրենասիրական նորանոր երանգներ ավելացնելու գրքի վրա: Այդ բոլորքուն հայրենասիրության

<sup>2</sup> «Հովիվք Շիրակայ», «Նուագք», հ. Գ, Վենետիկ, 1867, 247-264: Ի դեպ, հինգհատորյա բանաստեղծությունների այս ժողովածուի եղած միակ արձակ գործը: «Ամսոց բնական նշանները», «Բազմավեպ», 1867, հունվար-դեկտեմբեր: «Նվեր տղայոց», Վենետիկ, 1866, էջ 76 և այլն:

հետևանքով «Հուշիկը հայրենյաց հայոցը» լույս աշխարհ գալուն պես, հաստատուն կերպով ապահովեց իր տեղը հայ գրականության անդաստանում, դարձավ «պաշտելի գիրք» (Ա.Չոպանյան), որը մի շարք սերունդների համար հոգևոր դաստիարակության հզոր զենքերից մեկը հանդիսացավ: Մինչև այսօր էլ չի հնացել Ալիշանի ջերմ հորդորը՝ ուղղված հայությանը. «Ո՛վ Հայկակ, ո՛վ հայ պատանիք,- գրում էր նա, – աղեկ քաղաքացի ըլլալու համար պետք է քննել ու սովորիլ զհայրենիս: Քննեցեք ու սովորեցեք ուրեմն այդ ազնիվ և բարեբեր Հայաստանը, իբրև հայրենիք ձեր և դայակ ամենայն աշխարհի. քննեցեք այդոր բնակավայրերը, քննեցեք այդոր բարոյականը, քննեցեք այդոր բարգավաճումը ի հարուստ լեզվին, որ ապահով գրավական մ' է տարատեսակ արկածներով հնձված գրականությանը»:

Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունների գաղափարական շարունակողները հանդիսացան մեր դասական արձակագիրներից Բաֆֆին, Մուրացանը, Պատկանյանը, Ծերենցը և էլի ուրիշներ, որոնց գործերին ծանոթանալիս չի կարելի չնկատել «Քաղցրագրուցիկ Նահապետի» որոշակի ազդեցությունը: Մինչև իր կյանքի վերջն էլ շարունակեց ստեղծագործել Ալիշանը (վերջին գրաբար բանաստեղծությունը, նվիրված Մխիթարյան միաբանության հիմնադրման երկու հարյուրամյա հոբելյանին, գրել էր 1901 թ. սեպտեմբերին, այսինքն՝ մահվանից երկու ամիս առաջ), սակայն հետագա շրջանի նրա գործերը արդեն որոշիչ չեն հանդիսանում ինչպես նրա՝ իբրև ստեղծագործողի, այնպես էլ հայ գրականության բնագավառում: Իր գրա-պատմական խոշոր և, որոշ իմաստով, անփոխարինելի դերը կատարելով 19-րդ դարի 60-ական թվականների ժամանակատահվածում, հանդիսանալով այդ ժամանակաշրջանը նախապատրաստողներից մեկը, Ալիշան-գեղարվեստագիրը նույն այդ թվականներից սկսած, աստիճանաբար սկսեց զիջել իր դիրքերը, ճանապարհ տալով Ալիշան-գիտնականին:

Գիտական փոքրածավալ հոդվածներով, որոնք ավելի շուտ հանրամատչելի մակարդակով գրված հաղորդումների բնույթ ունեն, Ալիշանն սկսեց հանդես գալ դեռ 40-ական թվականներից սկսած, իրենց պարբերականի՝ «Բազմավեպի» էջերում: Հոդվածներ են դրանք, որոնք, իհարկե, հեռու են գիտական ծանրակշիռ խոսք լինելուց, բայց դրանք այն նախնական աստիճաններն էին, որոնք ձև և ուղղություն տվեցին Ալիշան-մտավորականին: Առաջին ծավալուն (801 էջ) աշխատությունը, որով Ալիշանը հայտ էր ներկայացնում գիտության բնագավառ մտնելու համար, ուներ «Քաղաքական աշխարհագրութիւն, նկարագրոյց պատկերօք» խորագիրը, հրատարակվել էր Վենետիկում 1853 թ. և, որ կարևոր է՝ ուներ «Հաւաքեաց հ. Ղևոնդ Մ(արգարի) Ալիշան» նշումը: Այս մեկ հատիկ «հաւաքեացը» արդեն բացահայտում է աշխատության թե՛ ստվերոտ, և թե՛ լուսավոր կողմերը: Ձեռնամուխ լինելով գրել երկրագնդի բոլոր աշխարհամասերում եղած բոլոր մեծ ու փոքր պետությունների (ընդհուպ մինչև քաղաք-պետություն Մոնակո, Նուբիա, Եթովպիա, Մուդան, Լիբերիա) աշխարհագրությունները իրենց քաղաքական-հասարակական բնութագրություններով, Ալիշանը, հասկանալի է, իրեն հարկավոր նյութը ծաղկաքաղ էր անելու այլևայլ (մեծ մասամբ եվրոպական) աշխարհագրագետների աշխատություններից: Սա էլ նշանակում էր, որ հեղինակը, եթե չասենք ոչ մի, համենայն դեպս շատ փոքր քանակով նորություն կամ ինքնուրույն խոսք պետք է ունենար ասելու, մի բան, որ հենց սկզբից իսկ, իջեցրեց գրքի գիտական-ճանաչողական արժեքը: Ներշնչող էր ու սպասելիքների տեղ թողնող վերնագրի «Քաղաքական» բառը, որովհետև այդ բնույթի գործ, եթե իհարկե այն արվեր ինչպես որ պետք էր, կլիներ աննախադեպ ոչ միայն Մխիթարյանների մոտ, այլև մեր ամբողջ հասարակագիտական գրականության բնագավառում: Չմոռանանք, որ աշխատությունը գրվել էր 1853 թ., այսինքն՝ երբ արդեն տեղի էին ունեցել ֆրանսիական՝ 1799 և 1848 թթ. հեղափոխությունները, իտալական՝ 1848-89 թթ. հեղափոխությունն ու Վենետիկի հերոսամարտերը (վերջինին, ի դեպ, անձամբ ականատես ու ականջալուր էր եղել ինքը), Անգլիան կատարել էր գաղութատիրական բնույթի իր

նվաճումների գերակշիռ մասը և այլն: Երևույթներ էին սրանք, որոնց չէր կարող չանդրադառնալ քաղաքական աշխարհագրություն գրողը և չէր կարող իր ինքնուրույն վերաբերմունքը ցույց չտալ: Այդ անելուն, սակայն, խանգարում էին շատ հանգամանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ էր տալ տվյալ երևույթի քաղաքական բնութագրականը կամ բացահայտել նրա հասարակական նշանակությունը, Ալիշանը բավարարվում էր մեկ-երկու ընդհանուր նախադասություններով, անում մի քանի անկիրք նկարագրություններ և դրանով հարցը փակում: Ահա, օրինակ, Ֆրանսիական Մեծ հեղափոխությանը տրված Ալիշանի բնութագիրը. «Լիւդովիկոս Փիլիպոս (իմա. Լուի-Ֆիլիպ. Ս.Շ.), որ և թագաւոր Գաղղիացոց կոչուէր, և ատենք կրկին հաստատեալ կային, ոչ զիջանէր նոցա (իմա. Ժողովրդին. Ս.Շ.) ի կամս իւրեանց, խռով մեծ յարցուցին ի 24 փետրուարի 1848 ամին, որ զԻտալիա և զԳերմանիա դրդեցոյց, թագաւորն ամենայն տամբ իւրով փախաւ յԱնգղիա և անդ մեռավ (1850 թ.): Իսկ Գաղղիացիք, յետ իննամսեայ տեղական իշխանութեան՝ կարգեցին հասարակապետութիւն, նախագահ ընտրեալ զԼուդովիկոս Նապոլեոն, զեղբորորդի մեծի ինքնակալին» (նշվ. աշխ. էջ 159): Այս է բոլորը. այս է «Քաղաքական աշխարհագրութիւն» խորագիրն ունեցող աշխատության մեջ ֆրանսիական հեղափոխությանը տրված քաղաքական-հասարակական բնութագրականը:

Նման հատվածներ կարելի է էլի բերել, իսկ այս բոլորի հետևանքով հասկանալի է դառնում, թե ինչու պետք է Ալիշանի սույն աշխատությունը առավել քան սովորական ապագայի արժանանար:

Եթե այսպիսի ճակատագիր վիճակվեց Ալիշանի առաջին աշխատությանը, ապա պատկերը մեկից փոխվեց հաջորդ՝ «Տեղագիր Հայոց Մեծաց» աշխատության առիթով, որը լույս աշխարհ եկավ 1855 թ. կեսերին, Վենետիկում: «Տեղագիր Հայոց Մեծացը» աղմկոտ հաջողություն ունեցավ: Նրա մասին դրվատական ու հիտալից գրախոսականով հանդես եկավ ակադեմիկոս Մարի-Ժան Բրոսսեն, իսկ տարիներ անց՝ 1869 թվականին, ամբողջ աշխատությունը ֆրանսիացի հայագետ Էդուարդ Դյուրյորիեյի թարգմանությամբ, ընդարձակ ներածականով ու ծանոթագրություններով, հատվածաբար սկսեց հրատարակվել «Ժուրնալ Ազիատիկ» հանդեսում: Ոչ քիչ թվով դրվատական «մտածականներով» հանդես եկան նաև հայկական պարբերականները:

Ի տարբերություն իր նախորդ աշխատության, Ալիշանն այս անգամ ուսումնասիրության նյութ էր դարձրել միայն ու բացառապես պատմական Հայաստանի աշխարհագրությունը: Տրված է Հայաստան աշխարհի «Բնական նկարագիրը», այսինքն՝ գետեր, լեռներ, կլիմայական բնութագրականներ, բուսական և կենդանական աշխարհ, արհեստների տեսակներն ու տարածվածությունը: Ապա հաջորդում էր պատմական Հայաստանի նահանգների (Վասպուրական, Սյունիք, Արցախ, Այրարատ, Տայք և այլն) պատմա-աշխարհագրական նկարագիրը, շարադրված էր տվյալ վայրերում գտնվող հնությունների (օր. Էջմիածին Մայր տաճար, Վանա բերդ, Կարսի եկեղեցիներ և այլն) գիտա-բանասիրական պատմությունը և այդ հենքի վրա արվում են մասնագիտական բնույթի խորանիստ վերլուծություններ: Աշխատությունն ավարտվում է տեղանունների մանրակրկիտ ցանկով: «Տեղագիր Հայոց Մեծացը» շրջադարձային կետ հանդիսացավ Ալիշան-մտավորականի կյանքում: Այդ աշխատությունից սկսած, նա այլևս երբեք չանդրադարձավ «համաաշխարհային» բնույթի աշխարհագրություններ գրելուն և վերջնականապես դիմադարձ եղավ դեպի Հայաստան երկիրը: Այս հանգամանքը հղի էր բազում դժվարություններով, որոնցից ամենակարևորն այն էր, որ Ալիշանը ձեռնամուխ էր լինում տեղագրելու մի երկիր, որտեղ ոչ միայն ինքը ոչ մի անգամ չէր եղել, այլև հենց այդ երկրի՝ Հայաստան աշխարհի մասին եղած վերջին շրջանի պատմա-աշխարհագրական տեղեկությունները ծայրաստիճան կցկտուր էին, հակասական, ավելի շուտ իրար բացասող, քան լրացնող: Այս էր պատճառը, որ Ալիշանը սկզբից իսկ հրաժարվեց գիտական աշխարհագրություն գրելու՝ ընդունված ու տարածված եղանակից և առաջին պլան քաջեց տվյալ նահանգի, ասենք՝ Միսականի, կամ Այրարատի, կամ Միսուանի գիտա-բանասիրական ամբողջ

պատմությունը, սկսած հին-հնագույն ժամանակներից, մինչև մեր օրերը, տվեց տվյալ գավառի՝ հնարավորինս ճշգրտված պատմա-աշխարհագրական բնութագրությունը: Միաժամանակ և նույն պլանով տրված են Հայաստանում եղած նշանավոր քաղաքների (Էջմիածին, Գյումրի, Երևան, Կարս) մանրակրկիտ պատմությունն ու աշխարհագրությունը, այնտեղ տեղի ունեցած բոլոր նշանավոր դեպքերի հանգամանակից վերլուծությունը: Աչքաթող չի արված, վերջապես, հայ հին ու միջնադարյան բանաստեղծների այն գործերը, որոնք նվիրված են տվյալ քաղաքին (Անի, Եդեսիա), կամ պատմական անձնավորությանը (Ներսես կաթողիկոս Աշտարակեցի) և այլն:

Այս ամենի համամիասնությունը և, մանավանդ, «Տեղագիր Հայոց Մեծացի» ունեցած դրական ընդունելությունը պատճառ դարձան, որ Ալիշանը 1860-ական թթ. սկսած հղանա իր վիթխարիությամբ աննախադեպ մի ծրագիր, որի ապշեցուցիչ չափերը անգամ այսօր դժվար է պատկերացնել: Հիշյալ ժամանակաշրջանից սկսած, նա ձեռնամուխ եղավ պատմական Հայաստանի բոլոր տասնհինգ նահանգների (իր լեզվով ասած՝ «աշխարհների»), հետևաբար և՛ 191 գավառների մասին պատմա-աշխարհագրական ուսումնասիրություններ գրելուն, որը, ըստ հեղինակի նախնական մտահղացման պետք է զետեղվեր 20-22 մեծադիր հատորներում: Այդ անել կարողանալու համար, նախ՝ նա սկսեց ամենալայն գրագրություններ հայ, ռուս և եվրոպացի բազմաթիվ գիտնականների հետ, գրելով ամենազանազան բնույթի ու բովանդակության ավելի քան երեք հազար նամակ: Սկսեց ամենայն ուշադրությամբ կարդալ ու վերակարդալ իրենց մոտ եղած մինչ երեք հազար հինգ հարյուր հայկական ձեռագրերը՝ պատմական Հայաստանի տարբեր գավառների վերաբերյալ հնարավորության սահմաններում ամեն տիպի տեղեկություններ դուրս գրելու և դասդասելու համար: Սկսեց իր ժամանակի գիտության մակարդակի քննական բովով անցկացնել ամբարած վիթխարի նյութը, առավել ճշմարտացի ու հավանականը մյուսներից տարբորոշելու, կասկածահարույց փաստերն ու իրողությունները նորից ու նորից ստուգելու համար: Հեշտ է պատկերացնել, թե այդ բոլորից հետո, ինչպիսի արժեքավոր գործ կլիներ այդ հատորներից յուրաքանչյուրը, և դրանց դերը մեր պատմա-աշխարհագրական ու հայագիտական գրականության մեջ: 1881թ. հրատարակված «Շիրակ» աշխատությունը եկավ ազդարարելու վերոհիշյալ խոշոր ձեռնարկման անդրանիկ պտուղը. ի դեպ, Ալիշանի աշխատություններից առաջինն ու միակը, որի ձեռագրերը հեղինակը, ի նշան առ հայրենիքն ունեցած խանդակաթ սիրո, հանձնել էր Հայաստան ուղևորվող Մխիթարյան հայրերից մեկին, Ախուրյան գետի ալիքներին «ի պահ» տալու համար<sup>3</sup>: Աշխատությունը գրված է գիտա-աշխարհագրական ուսումնասիրություն գրելու այն մեթոդով, որի առաջին կիրառողը եղավ ինքը՝ Ալիշանը, և որի բնութագիրը համառոտ տրվեց վերևում: «Շիրակից» չորս տարի հետո՝ 1885 թ., Վենետիկում հրատարակվեց «Միսուան և Լևոն Մեծագործ» խորագիրը կրող՝ Ալիշանի հաջորդ աշխատությունը, որը գալիս էր հավաստելու, որ նրա հեղինակը շարունակում էր հաստատակամորեն իրականացնել ամբողջ Հայաստանը տեղագրելու վերաբերյալ իր վիթխարի մտահղացումը: Աշխատությունը նախապես որոշված է եղել կոչել «Կիլիկիա», քանի որ այն, ըստ էության, վերաբերում էր Կիլիկիայի աշխարհագրությանն ու պատմությանը, սակայն հետագայում և հավանաբար վերջին բռայեին, այդ պլանը փոխվում է: Ալիշանն իր աշխատությանը կցում է «Լևոն Մեծագործ» ընդարձակ պատմական ուսումնասիրությունը (100 մեծադիր էջ), որը նա գրել էր ավելի առաջ, հետևելով ինչպես արաբ ու ասորի պատմիչներին, այնպես էլ մեր Գրիգոր Տղային, որոնք պատմական Կիլիկիան իր աթոռանիստ քաղաքի՝ Միսի անունով կոչում էին Միսուան, իր աշխատությունն էլ վերանվանել է այդ նույն ձևով և այդպես էլ հանձնել հրատարակության: Ինչպես և սպասելի էր, տարիների հետևողական աշխատանքի արդյունքն այն եղավ, որ հայ ժողովուրդն ստացավ նմանը չունեցող մի աշխատություն,

<sup>3</sup> Ահա թե ինչ է նշում այս կապակցությամբ Ալիշանի կենսագիր Միսոն Երեմյանը. «Վանքի քահանաներեն մին, դեպի Մեծ Հայաստան ուղևորվելու ատեն, Հայր Ալիշան, իր տեղագրական գործերեն անդրանիկն՝ ՇԻՐԱԿԸ (ընդգծումը մերը չէ. Ս.Շ.) ձեռագիրներն կհանձնե անոր և կխնդրե, որ զայն իբրև պարզև հայրենյաց, նետե Ախուրյան գետը» (Ս.Երեմյան, Վենսագրություն Հ.Ալիշանի, Վենետիկ, 1902, էջ 192):

որը հրատարակվելու օրվանից սկսած հայ և եվրոպացի մասնագետների դրվատանքին արժանացավ:

Էլ ավելի ջերմորեն ընդունվեց և, որ կարևոր է՝ հասարակական-քաղաքական անսպասելի արձագանքների տեղիք տվեց Ալիշանի հաջորդ նշանավոր ուսումնասիրությունը՝ «Այրարատը», որը նվիրված էր Հայաստանի համանուն գավառի տեղագրությանը: Վերջինիս հրատարակությունը լրիվ տեսքով ավարտվեց 1890 թ., իսկ պատմությանը փոքր-ինչ ծանոթ ամեն մարդ գիտե, թե մեր ժողովրդի կյանքում ինչ ժամանակաշրջան էր անցյալ դարի 90-ական թվականները: Ոչ մուսուլմանական ազգերի հանդեպ վայրագության հասնող խստությունների, ամենաանմեղ արարքների մեջ «պետական դավաճանություն», «Օսմանյան կայսրության ամբողջականությունը քայքայելու փորձ» տեսնելու, անսասնձ կամայականությունների տարիներ էին դրանք, որոնք կապվում էին «Կարմիր սուլթան» Աբդուլ Համիդ II-ի անվան հետ, կամայականություններ, որոնք հաճախ վերածվում էին անհեթեթության<sup>4</sup>: Եվ այսպիսի պայմաններում հրապարակ է գալիս Ալիշանի աշխատությունը, որը կրում է «Այրարատ» անունը, որի սոսկ կիրառությունը և առավել ևս՝ աշխատության մեջ արծարծված մտքերն ու դրույթները 1890-ական թթ. կատարյալ մեղսագործություն էին թվում: Գիրքը լույս աշխարհ գալուն պես, բազում անգամ կրկնվեց առաջաբանում հեղինակի արած կրքոտ հայտարարությունը. «Միտք իմ և բարք, որպես և վիճակ և կնիք՝ հայրենասիրութիւն խնդրէ զխաղաղականն. այնպէս սիրեմ և զհայրենիս, որպէս ի մանկութեան զհայր և զմայր» (էջ Լ): Օրինակներ կարելի է բերել ինչքան ասես և այստեղից էլ հասկանալի է դառնում, նախ, որ Ալիշանը իր գիտական գործունեությամբ էլ արծարծում էր նույն ազատաբաղձ, հայրենասիրական տրամադրությունները, ինչ անում էր գեղարվեստական գրականության միջոցով և երկրորդ, հասկանալի էր դառնում, թե ինչու «Այրարատի» հրատարակվելուց հետո նրա նկատմամբ եղած հալածանքները պետք է ավելի մեծ չափերի հասնեին: Այդ հալածանքները ծայր առան դեռ 1885 թ., երբ թուրքական կառավարությունը արգելեց հենց նոր լույս տեսած «Միսուան և Լևոն Մեծագործ» աշխատության մուտքը Օսմանյան կայսրության սահմաններ, պատճառաբանելով, որ նրա ճոխ հայրենասիրական առաջաբանը գրգռում է օսմանահպատակ ռայայի միտքը և նրան հուզումների է դրդում: Իսկ երբ հրատարակվեց «Այրարատը», այսինքն՝ սկսած 1890-ական թթ.-ից, արգելվեց Ալիշանի՝ առանց բացառության բոլոր աշխատությունների մուտքը Թուրքիա, մի բան, որն, ի դեպ, ներքին մեծ տվյալանքների պատճառ հանդիսացավ հեղինակի համար:

Ընդամենը երեք տարի անց Ալիշանը գրեց իր չորրորդ նշանավոր աշխատությունը՝ «Միսականը», որը հրատարակվեց Վենետիկում 1893 թ.: Այստեղ հեղինակը քննության առարկա էր դարձրել Մյունխենից աշխարհը: Ցավոք, այս աշխատությունը եղավ Ալիշանի վիթխարի ձեռնարկման կարապի երգը: Հայաստանի բոլոր «աշխարհների» մասին քննական ուսումնասիրություն գրելու 20-22 հատորանոց պլանը առարկայացավ չորս անուն գործով միայն և հեղինակի մահվան պատճառով մնաց անկատար<sup>5</sup>:

Այսքանն է համառոտակի Ալիշանի արածը, իր իսկ ոճով ասած՝ «Ի տիար արձանացուցվածք»-ը: Մենք չխոսեցինք նրա բանահավաքային գործունեության մասին, գործունեություն, որի հետևանքը եղավ հայերեն ու անգլերեն համատեղ բնագրերով կազմված «Հայ երգք ռամկականք» հոշակավոր ժողովածուն (Վենետիկ, 1852 թ.), որը էլի երեք վերահրատարակության արժանացավ և բարձր

<sup>4</sup> Քիմիայի բոլոր դասագրքերից, օրինակ, հանվել էր ջրի՝ H<sub>2</sub>O բանաձևը, քանզի կարող էին կարդալ. Համիդ Երկրորդը հավասար է գրոյի: Արաբական բառարաններից վերացել էր «Համիլ» բառը, որը նշանակում էր «ավանակ»: Չէր կարելի օգտագործել «աստղը խավարեց», «աստղն ընկավ» կամ նույնաբնույթ այլ արտահայտություններ, որովհետև «Օգոստափառ Սուլթանը» ապրում էր «Աստղի պալատում» (թուրքերեն՝ «Յաղղզ քյոշկ») և, ուրեմն, դա կարող էր դիտվել որպես ակնարկ և այլն:

<sup>5</sup> Ինչպես մեզ տեղեկացրեցին Վենետիկի Միխայիլյան միաբանության անդամներ Սերովբա Ազրյանը և Եփրեմ Տեր-Ղազարյանը, Ալիշանը ավարտել էր այդ շարքի հինգերորդ գործը «Վասպուրականը» (երկու հատոր), որն այժմ գտնվում է հեղինակի անձնական արխիվում և սպասում է իր հրատարակողին:



գնահատվեց հայագետ Դյուլյորիեյի, Պետերմանի, Չոպանյանի կողմից: Չխուսեցինք Ալիշան հայագետ-բանասերի մասին, որի «Սոփերք Հայկականք» (Անդ, 1853-61 թթ, քսանչորս հատորիկներ), «Շնորհալի և պարագա յուր» (Անդ, 1873 թ.), «Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց» (Անդ, 1895 թ.), «Հայ-Վենետ» (Անդ, 1896 թ.) աշխատությունները այսօր էլ սեղանի գիրք են մասնագետների համար: Սրանց արժեքը ավելի է մեծանում այն պատճառով, որ հեղինակն օգտվել է ինչպես իրենց՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության հարուստ ձեռագրաֆոնդերից, այնպես էլ Հռոմի, Միլանի, Տուրինի, Վենետիկի գրադարաններից ու արխիվներից, որոնք այսօր անմատչելի են ոչ-մխիթարյան հայագետներին: Կանգ չառանք Ալիշանի թարգմանական գործունեության վրա, քանզի տիրապետելով եվրոպական ու ասիական տասներկու լեզուների, նրա թարգմանական «ակտիվում» կային Շիլլերի, Գյոթեի, Բայրոնի, Լոնգֆելդի, Ուիլյամսի, Լամարթինի, Պոպայի, Լաֆոնտենի, Միլտոնի և ուրիշ՝ լրացուցիչ մեկնաբանությունների կարիք չունեցող անուններ: Չանդրադարձանք Ալիշան-բնագրագետին և նրա կազմած «Կիրակոս պատմիչ. (քննական բնագիր, մասնագիտական առաջաբան և ծանոթագրություններ)» Վենետիկ, 1864 թ., «Սմբատ Գունդստաբլ հայոց (հայերեն ֆրանսերեն համատեղ բնագրեր, առաջաբան և ծանոթագրություններ)», Վենետիկ, 1876 թ. և այս բնույթի մյուս աշխատություններին:

Ինչպես դժվար չէ նկատելը, Ալիշանի կատարած գործը թեկուզ համառոտ բնութագրելու համար մեկ՝ անգամ և ծավալուն հոդվածի սահմանները, ամենին էլ չեն կարող բավարար համարվել: Այս ջանադիր գործունեության հետևանքով Ալիշանն աստիճանաբար համաեվրոպական ճանաչում է ստանում: 1886 թվականին Ֆրանսիական ակադեմիան նրան շնորհում է Պատվո Լեգեոնի շքանշան: 1887 թվականին՝ դառնում է Մոսկվայի հնէաբանական ընկերության անդամ: 1896 թ. Պետերբուրգի հնախոսական ընկերությունը Ալիշանին ընտրում է իր պատվավոր անդամների թվում, իսկ 1897 թվականին նա ընտրվում է Ենայի Փիլիսոփայական ակադեմիայի անդամ և այլն: Այս թվարկումը կարելի է էլի շարունակել:

Մահանալով ութսուն տարեկան հասակում՝ 1901 թ. նոյեմբերի 9 (22)-ին Վենետիկում, Ալիշանը հայ ժողովրդին է թողել ամենատարբեր բնույթի ու բովանդակության շուրջ քառասուն հատորանոց գրական ժառանգություն, որի լավագույն մասը ոչ միայն դիմացել է ժամանակի խստաշունչ քննությանը, այլև այսօր ավելի բյուրեղացած ձևով է ներկայանում մեզ: Տարիները սուկ սրբագործեցին Ալիշան-Նահապետի անունն ու գործը, վերապահելով նրան եզակի ու անկրկնելի մեծություն լինելու բարձր պատիվը:

«Լենինյան ուղիով»,

N 8, օգոստոս